

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ԿԱՆԽԻԿ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓՈԿՄԱՆ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության տարածքում ապրանքների (գույքի) իրացման, ապրանքների (գույքի) օգտագործման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման գործարքների դիմաց, աշխատավարձերի, կրթաթոշակների, կենսաթոշակների, նպաստների, փոխառությունների, ներկայացուցչական ծախսերի, գործուղման նպատակով կատարվող անկանխիկ ձևով վճարումների, ինչպես նաև կանխիկ գործառնությունների սահմանափակման հետ կապված այլ հարաբերություններ:

2. Սույն օրենքով սահմանված կանխիկ գործառնությունների սահմանափակումները չեն տարածվում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված չափաքանակներով պետական հատուկ նշանակության ապրանքների (գույքի), ծառայությունների և աշխատանքների դիմաց վճարումների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դեպքերում անհետաձգելի վճարումներ կատարելու անհրաժեշտության առկայության դեպքում կատարվող վճարումների վրա:

Հոդված 2. Օրենքի գործողության ոլորտը

1. Սույն օրենքը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող քաղաքացիների և Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կազմակերպությունների վրա:

2. Սույն օրենքը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում կնքված և դրանց դիմաց Հայաստանի Հանրապետության տարածքում վճարում նախատեսող գործարքների վրա, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կնքված, սակայն Հայաստանի Հանրապետության տարածքում վճարում նախատեսող գործարքների վրա:

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Ստորև բերված հասկացությունները սույն օրենքում օգտագործված են հետևյալ իմաստներով`
- 1) անկանխիկ ձևով վճարումներ` վճարումներ, որոնք իրականացվում են վճարողի բանկային հաշվից և որոնց արդյունքում վճարման ենթակա դրամական միջոցները մուտքագրվում են շահառուի (վճար ստացողի) բանկային հաշվին.
 - 2) առևտրի օբյեկտ` ,Առևտրի և ծառայությունների մասին Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված առևտրի օբյեկտ, բացառությամբ տաղավարների.
 - 3) հանրային սննդի օբյեկտ` ,Առևտրի և ծառայությունների մասին Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հանրային սննդի օբյեկտ, բացառությամբ խոհարարական արտադրանքի պատրաստման և իրացման այլ օբյեկտների:
 - 4) աշխատավարձ` Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով նախատեսված աշխատավարձ և դրան հավասարեցված միջոցներ.
 - 5) կանխիկ գործառնություններ` սույն օրենքով սահմանված գործարքների (պայմանագրերի) դիմաց, աշխատավարձի, այլ վճարումների ընդունումը և կատարումը կանխիկ դրամով.
 - 6) կանխիկ դրամ` Հայաստանի Հանրապետության արժույթն ու արտարժույթը թղթադրամների կամ մետաղադրամների տեսքով.
 - 7) քաղաքացիներ` Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ, օտարերկրյա քաղաքացիներ, երկքաղաքացիներ, քաղաքացիություն չունեցող անձինք.
 - 8) կազմակերպություններ` Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված (պետական գրանցում ստացած, հաշվառված) իրավաբանական անձ, դրա` Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առանձնացված ստորաբաժանումներ և հիմնարկներ, օտարերկրյա կազմակերպությունների Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առանձնացված ստորաբա-

ժանույններ, անհատ ձեռնարկատերեր, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, դրանց հիմնարկներ:

9) վճարային քարտ սպասարկող սարքեր՝ ՊՈՍ-տերմինալ, իմպրինտեր, բանկոմատ և այլ նմանատիպ սարքեր:

Հոդված 4. Քաղաքացիների և կազմակերպությունների կողմից անկանխիկ ձևով գործարքների իրականացումը

1. Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիների և կազմակերպությունների կողմից 2012 թվականի հունվարի 1-ից՝ 1 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ապրանքների (գույքի) օտարման, ապրանքների (գույքի) օգտագործման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման գործարքներում դրանց դիմաց վճարումը և վճարի ստացումը իրականացվում է անկանխիկ ձևով՝ անկախ վճարման կարգից, եթե այլ օրենքներով այդ գործարքների դիմաց վճարման ավելի ցածր սահմանաչափեր նախատեսված չեն: Սույն մասից այլ բացառությունները սահմանված են նաև սույն օրենքի այլ հոդվածներով:

2. Կազմակերպությունների միջև, ինչպես նաև կազմակերպությունների և քաղաքացիների միջև 200.000 Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող փոխառությունները տրամադրվում են անկանխիկ ձևով, բացառությամբ բանկերի, վարկային կազմակերպությունների, գրավատնային գործունեություն իրականացնող անձանց, ինչպես նաև լիցենզիայի հիման վրա վարկեր և փոխառություններ տրամադրելու իրավունք ունեցող անձանց կողմից տրամադրվող փոխառությունների:

3. Կազմակերպություններն իրավունք չունեն անկանխիկ ձևով վճարում նախատեսող ապրանքների (գույքի) օտարման, ապրանքների (գույքի) օգտագործման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման գործարքներում (պայմանագրերում) կամ գործարքների (պայմանագրերի) առաջարկներում (օֆերտաներում) առաջարկել և (կամ) ստանալ ավելի բարձր գին (արժեք), քան առաջարկում և (կամ) ստանում են կանխիկ ձևով վճարում նախատեսող ապրանքների (գույքի) օտարման, ապրանքների (գույքի) օգտագործման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման գործարքներում (պայմանագրերում) կամ գործարքների (պայմանագրերի) առաջարկներում (օֆերտաներում):

4. Կենտրոնական բանկն իր նորմատիվ իրավական ակտերով կարող է սահմանել սույն հոդվածով սահմանված գործարքների շեմը գերազանցող վճարումները անկանխիկ իրականացնելիս այդ գործարքների համար միջնորդավճարների վճարման դեպքերը, կարգը և պայմանները:

Հոդված 5. Աշխատավարձի և այլ վճարումների կանխիկ ձևով վճարման սահմանափակումները

1. Աշխատավարձերը անկախ չափից վճարում են անկանխիկ ձևով 2012 թվականի հունվարի 1-ից՝ քաղաքային համայնքներում գործող տեղական ինքնակառավարման մարմինները, պետական կառավարչական հիմնակները, դրանց՝ քաղաքային համայնքներում գործող առանձնացված ստորաբաժանումները:

2. Օրենքով կամ աշխատանքային պայմանագրով սահմանված ամսական 100.000 Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող աշխատավարձերը վճարվում են անկանխիկ ձևով 2012 թվականի հունվարի 1-ից՝ Հայաստանի Հանրապետության քաղաքային համայնքներում գործունեություն իրականացնող կազմակերպությունների կողմից:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված պահանջները չեն տարածվում հաշմանդամություն ունեցող անձին վճարվող աշխատավարձի վրա: Հաշմանդամություն ունեցող անձի ցանկությամբ, նրա աշխատավարձը կարող է վճարվել կանխիկ ձևով:

4. 100.000 Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող կրթաթոշակները, կենսաթոշակները, նպաստները, ներկայացուցչական ծախսերի դիմաց կատարվող վճարումները, գործուղման նպատակով կատարվող վճարումները կատարում են անկանխիկ ձևով սկսած 2012 թվականի հունվարի 1-ից՝ քաղաքային համայնքներում գործունեություն իրականացնող կազմակերպությունների կողմից:

1) Սույն հոդվածի 4-րդ մասով կենսաթոշակի և նպաստի համար սահմանված պահանջները չեն տարածվում կենսաթոշակ և նպաստ ստանալու իրավունք ունեցող առանձին կատեգորիայի անձանց վրա: Սույն հոդվածի 4-րդ մասից բացառություն կազմող կանխիկ ձևով կենսաթոշակ և նպաստ ստացող անձանց կատեգորիաները, ինչպես նաև այդ անձանց կենսաթոշակ և նպաստ վճարելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

5. Սկսած 2012 թվականի հունվարի 1-ից՝ քաղաքային համայնքներում գործունեություն իրականացնող բժշկական կազմակերպություններում 200.000 Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող բոլոր տեսակի վճարներն ընդունվում են անկանխիկ ձևով:

6. Սկսած 2012 թվականի հունվարի 1-ից՝ քաղաքային համայնքներում գործունեություն իրականացնող կրթական հաստատություններում բոլոր տեսակի վճարներն ընդունվում են անկանխիկ ձևով:

7. Ապահովագրական հատուցումները կատարվում են անկանխիկ ձևով սկսած 2012 թվականի հունվարի 1-ից՝ քաղաքային համայնքներում:

8. Սույն օրենքով սահմանված գործարքները և (կամ) գործառնությունները բանկի կողմից թողարկված քարտով այդ բանկին պատկանող բանկումատի միջոցով իրականացնելիս հաճախորդից այդ գործարքների և (կամ) գործառնությունների համար բանկի կողմից միջնորդավճար չի գանձվում:

Հոդված 6. Գործարքների (պայմանագրերի) մասնատումը

Սույն օրենքի պահանջներից խուսափելու կամ դրանք չկատարելու նպատակով արգելվում է գործարքը (պայմանագիրը) մասնատել երկու կամ ավելի մասերի:

Հոդված 7. Արտարժույթով արտահայտված գործարքի (պայմանագրերի) և սույն օրենքով սահմանված վճարների հաշվարկը

1. Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված դեպքերում սույն օրենքով սահմանված գործարքների (պայմանագրերի) դիմաց արտարժույթով վճարում իրականացնելիս դրանց հաշվարկը սույն օրենքով սահմանված նպատակներով կատարվում է՝ ելնելով գործարքի (պայմանագրի) կնքման օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից:

2. Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված դեպքերում սույն օրենքով սահմանված վճարները արտարժույթով վճարելիս դրանց հաշվարկը սույն օրենքով սահմանված նպատակներով կատարվում է՝ ելնելով դրանց վճարման օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

Հոդված 8. Առևտրի օբյեկտներում և ծառայությունների մատուցման օբյեկտներում և այլ վայրերում վճարային քարտեր սպասարկող սարքերի կիրառումը

1. Օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից՝ մեկ տարվա ընթացքում 100 մ², 2014 թվականի հունվարի 1-ից - 50 մ² գերազանցող ընդհանուր մակերես ունեցող առևտրի օբյեկտներում, հանրային սննդի օբյեկտներում, հյուրանոցներում, բժշկական կազմակերպություններում տեղադրվում, իսկ հաճախորդի ցանկությամբ պարտադիր կիրառվում են վճարային քարտեր սպասարկող սարքեր:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է սահմանել այն պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև սույն հոդվածի 1-ին մասում չնշված կազմակերպությունների (օբյեկտների) ցանկը, որտեղ պարտադիր տեղադրվում և կիրառվում են վճարային քարտեր սպասարկող սարքեր:

3. Հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառում ծառայություններ մատուցող կազմակերպությունները պարտավոր են սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերում նշված օբյեկտների օգտագործողների (շահագործողների) հայտի հիման վրա տրամադրել վճարային քարտեր սպասարկող սարքերի կիրառումն ապահովող կապուղիներ և հեռախոսահամարներ:

4. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերում նշված օբյեկտներում վճարային քարտեր սպասարկող սարքերի անսարքության դեպքում երկու աշխատանքային օրվա ընթացքում տվյալ առևտրի կամ ծառայության մատուցման օբյեկտի օգտագործողը (շահագործողը) պարտավոր է վերանորոգել կամ փոխարինել տվյալ սարքը:

5. Վճարային քարտեր սպասարկող սարքերի սպասարկումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով ու համապատասխան պայմանագրերով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ II
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 9. Սույն օրենքի և սույն օրենքի հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջների նկատմամբ վերահսկողությունը

1. Կազմակերպությունների կողմից սույն օրենքի և սույն օրենքի հիման վրա ընդունված իրավական ակտերի պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն է իրականացնում և պատասխանատվության միջոցներ է կիրառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված մարմինը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված և (կամ) վերահսկվող անձանց նկատմամբ իրականացվող վերահսկողության և սույն օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթների նկատմամբ իրականացվող վերահսկողության:
2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված և (կամ) վերահսկվող անձանց կողմից սույն օրենքի և սույն օրենքի հիման վրա ընդունված իրավական ակտերի պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն է իրականացնում և պատասխանատվության միջոցներ է կիրառում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը:
3. Սույն օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի իրականացման նկատմամբ վերահսկողություն և պատասխանատվությունն իրականացվում է “Էլեկտրոնային հաղորդակցության մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն:

Հոդված 10. Սույն օրենքի և սույն օրենքի հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի խախտման համար պատասխանատվությունը

1. Սույն օրենքի կամ սույն օրենքի հիման վրա ընդունված իրավական ակտերի պահանջները 1-ին անգամ խախտելու համար կազմակերպություններից գանձվում է տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով, ընդ որում՝ սույն օրենքի յուրաքանչյուր պահանջի մի քանի խախտումներ թույլ տալու դեպքում յուրաքանչյուր խախտումը համարվում է մեկ խախտում:
2. Սույն օրենքի կամ սույն օրենքի հիման վրա ընդունված իրավական ակտերի պահանջները մեկ տարվա ընթացքում կազմակերպությունների կողմից 2-րդ անգամ խախտելու դեպքում գանձվում է տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:
3. Սույն օրենքի կամ սույն օրենքի հիման վրա ընդունված իրավական ակտերի պահանջները քաղաքացիների կողմից խախտելու համար պատասխանատվության միջոցները սահմանված են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով:

ԳԼՈՒԽ III
ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 11. Սույն օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2012 թվականի հունվարի 1-ից: